15 հունվարի 2015 թվականի N 6 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 976-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

-----------------------------------------------------------------------------------------------------------

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «Ինտերպակր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 200 միլիոն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը մինչև երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 976-Ա որոշման հավելվածի ցանկում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. | 87164000 | Բեռնատար ա/մեք. բաց հարթակ կիսակցորդ, օգտ., 1991 թ. BROSHUIS E2190 27 | հատ | 1 | Հոլանդիա/Ֆրանսիա | 9,236,000 |

».

2) ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին և 4.2-րդ կետերով.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| « | **4.1.** | **84351000** | **Խաղողի մամլիչ սարքավորում DIEMME AR 100NSA 2003 թ. 100 HL, օգտ.** | **հատ** | **1** | **Իտալիա/Ֆրանսիա** | **27,300,000** |
| | **4.2.** | **84138200** | **Խաղողի մամլիչի հեղուկի պոմպ՝ խաղողի նախնական ընդունման սնուցիչ տարայով, օգտ.** | **հատ** | **1** | **Ֆրանսիա/Ֆրանսիա** | **5,550,000** ». |

3) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| « | 6. | 85021180 | Գեներատոր՝ էլդիզելային ASAHI IGEN ASH G4 50 | հատ | 1 | Ֆրանսիա/Ֆրանսիա | 6,820,000 ». |

4) «Ընդամենը» տողում «308,200,000» թիվը փոխարինել «330,106,000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. հունվարի 16
Երևան